ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ԲԱՔՎԻ
ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ Գ. Ս.

Ապշերոնյան թերակղզում, որ միջնադարում կազմում էր պատմական Շիրվանի մի մասը, հայերը բնակվել են առնվազն վաղ միջնադարից: Բաքվի շրջակայքում հոծ հայկական համայնքների մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում XIV-XV դդ. տեղացի պատմիչ Աբդ ար-Ռաշիդ ալ Բաքուվին՝ ավանդաբար նրանց կոչելով քրիստոնյաներ: «Բաքույա քաղաքի մերձակայքը,- գրում է Բաքուվին,- բազմաբնակավայր է և յուրաքանչյուրն ունի ամրացված միջնաբերդ ամրապինդ պատերով: Այդ գյուղերի բոլոր բնակիչները քրիստոնյաներ են (իմա՛ հայեր - Ս.Գ.)»[1]: Ապշերոնյան թերակղզում վաղ քրիստոնեական մշակույթի հետքերի մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում նաև «Մեղու Հայաստանի» լրագիրը, ըստ որի՝ Բաքվից 4 վերստ հարավ-արևմուտք գտնվող Բիբի-Հեյբաթ ուխտատեղիում նախկինում եղել է «Քառասուն հայ կուսանաց» վանքը. - «…Քառասուն հայ կուսանաց վանք է եղել յիշեալ ուխտատեղին, այժմ՝ թուրքերն են տիրում թէ ուխտատեղիին, թէ նրա նաւթով լի հողերին»[2]:

Ապշերոնյան թերակղզու հայաբնակ բնակավայրերի շարքում հայ ժողովրդի պատմության մեջ կարևոր տեղ է գրավում սկզբնաղբյուրներում V դարից ի վեր հիշատակվող Բաքու քաղաքը[3]: Թերակղզու վրա կուչ եկած փոքրիկ և անհրապույր Բաքու քաղաքը, 1859 թ. վերջերին դառնալով երկրամասային նահանգական քաղաք, աստիճանաբար դուրս է գալիս նահապետական պարփակվածությունից և ընդերքի հեքիաթային հարստությունների շնորհիվ զարգանալով՝ բերդաքաղաքից դառնում աչքի ընկնող առևտրական

---

[1] **Абд ар-Рашид ал- Бакуви,** *Китаб тахлис ал-асар ваджлиб ал малик ал Каххар, М., 1971, с. 89-90.*

[2] *Մեղու Հայաստանի, Թիֆլիս, 23. II. 1883:*

[3] *Պատմությունն ավանդում է, որ Հայոց Արևելից կողմանց Վաչագան Բ Բարեպաշտ Արշակունի (485--510/23) թագավորը, երբ Կասպք-Փայտակարան նահանգի Բագավան գավառը 500 թ. իբրև օժիտ տվեց իր դստերը՝ Վարսենիկին, Բաքուն նրա ձմեռանոցն էր, իսկ ամառանոցը՝ Շամախին (Հանրամատչելի հանրագիտական բառարան, հ. Ա, կազմեց՝ Հ. Առաքելեան, Թիֆլիս, 1915, էջ 199): Ինչպես գրում է Ս. Էփրիկյանը՝ «Այս կրակոտ երկիրը (իմա՛ Բագավան գավառը - Ս.Գ.), Քրիստոսի 500 թուին Աղուանից Վաչագան թագաւորը, որ կը նստէր Պարտաւ քաղաքը, օժիտ տուեր էր իւր Վարսենիկ դստեր, որոյ ձմերոցը Բագուն էր, իսկ ամարանոցը Շամախին»* **(Էփրիկեան Ս.,** *Պատկերազարդ Բնաշխարհիկ բառարան, հ. Ա, գիրք Ա, Վենետիկ-Ս. Ղազար, 1903-1905, էջ 362): Ավանդության համաձայն՝ Բաքվում առաջներում եղել է կրակի և ծովի աստվածների բագինը (տե՛ս* **Բունիաթյան Ն.,** *Կրակապաշտների տաճարը Սուրախանիում, Ե., 1926, էջ 3-4): Եղիշա առաքյալը Աղվանից աշխարհ գալով՝ կործանել է այն և տեղը կանգնեցրել Քրիստոսի խաչը: Մեսրոպ Մաշտոցը այդտեղ մատուռ է շինել, իսկ Վաչագան Բ Բարեպաշտը 500 թ. մատուռի տեղում կառուցել էր եկեղեցի. «Իսկ Վաչագան Բարեպաշտ թագաւորն Աղուանից յամի Տեառն 500 շինեց եկեղեցի, ըստ այսմ և Բագուայ հին և նշանաւոր եկեղեցին…»* **(Սմբատեանց Մ.,** *Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք ի Շամախւոյ թեմի, Տփխիս, 1896, էջ 373):*

և տնտեսական կենտրոն: Դառնալով նահանգական քաղաք՝ Բաքուն արագությամբ ընդարձակվեց ու բարգավաճեց: Արագ տեմպերով սկսեցին զարգացում ապրել քաղաքաշինությունը և քաղաքային կյանքն ընդհանրապես: Բաքվի և Ապշերոնյան թերակղզու մյուս բնակավայրերի կառուցապատման ուղղությամբ և քաղաքաշինության ոլորտում մեծ դեր ունեցան հատկապես հայ ճարտարապետներն ու շինարարները, որոնց ջանքերով կառուցվեցին արդյունաբերական, բնակելի, հասարակական շենքեր և եկեղեցիներ:

Բաքու քաղաքի աստիճանական զարգացման և քաղաքային բընակչության աճի հետևանքով նկատելի է դառնում նաև հայ բնակչության թվի անընդհատ աճ: Եթե 1820-ական թթ. սկզբներին հայերը Բաքվում ունեին 50 տուն՝ 277 բնակչով (148 ար., 129 իգ.)[4], ապա 1886 թ. տվյալներով՝ 86.611 (54.823 ար., 31.768 իգ.), ազգաբնակչության մեջ հայերի թիվն արդեն հասնում էր 24.490-ի (17.483 ար. 7007 իգ.)՝ կազմելով ամբողջի 28,28%-ը[5]: Այդ տարիներին քաղա- քի հայ ընտանիքների մեծամասնությունը դեռևս ապրում էր Սբ. Աստվածածին եկեղեցու շրջակայքում[6], հին քաղաքի կենտրոնական մասում, նրա միջուկը կազմող բերդի շրջակայքում՝ բերդաթաղում: Քաղաքի աստիճանական զարգացման հետևանքով, հայերը սկսեցին բնակվել նաև բերդի և քաղաքի հարավային կողմում՝ արվարձանում: XIX դ. վերջին բուն քաղաքում և արվարձաններում (Բայիլ, Սաբունչի, Բալախանի, «Սև քաղաք») արդեն մեծացել էր հայերի թիվը: 1897 թ. մարդահամարի տվյալներով՝ Բաքվի ազգաբնակչության ընդհանուր թիվը հասնում էր 111.904-ի (66.893 - ար., 4.011 իգ.)[7], որից հայերը՝ 19.099 (12.574 ար., 6525 իգ.)[8]:

Բաքվում հայ բնակչության ստվարացման հետ մեկտեղ, բերդաթաղի ստորոտին, ծովեզերքի փարոսյան աշտարակի դիմաց գտնվող հայկական ամենահին՝ Սբ. Աստվածածին[9] եկեղեցուց բացի, անհրաժեշտություն առաջացավ կառուցել երկրորդ եկեղեցին: Եկեղեցու կառուցման նախաձեռնությունը պատկանում է Շամախու հայոց

---

[4] *Ֆիզիկական, ազգագրական եւ քաղաքական աշխարհագրութիւն Հայաստանի, կազմեց* **Աւետիք Տէր-Յակոբեան,** *Թիֆլիս, 1914 (Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 335, ց. 1, գ. 24, թ. 39, տե՛ս նաև* **Էփրիկեան Ս.,** *նշվ. աշխ., հ. Ա, գիրք Ա, էջ 363, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 866, թ. 1, տե՛ս նաև Հովիտ, Թիֆլիզ, 1910, 16 օգոստոսի, N 16, էջ 249:*

[5] *Свод статистических данных о населении Закавказскаго края, извлеченных из посемейных списков 1886 г. Бакинской губернии, Тифлис, 1893 (б. с.).*

[6] *ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 69:*

[7] *Первая всеобщая перепись населения Российской империи, 1897, LXI. Бакинская губерния. Под редакцией Н. А. Тройницкаго, т. 61, СПб., 1905, с. 1.*

[8] *Նույն տեղում, աղ. XIII, էջ 53:*

[9] *Սբ. Աստվածածին եկեղեցին կառուցվել է Վաչագան Բ Բարեպաշտ թագավորի կողմից 500 թ. կառուցված եկեղեցու տեղում: Եկեղեցին վերանորոգվել է 1789 թ., Շամախու հայոց թեմի առաջնորդ Ոսկան եպիսկոպոսի օրոք (1785-1796), հայ հասարակության հանգանակած գումարներով: Սբ. Աստվածածին եկեղեցին ընդհուպ մինչև 2006 թ. եղել է կանգուն: Ներկայումս խոնարհված են եկեղեցին և զանգակատունը, իսկ տեղում կառուցվել է սրճարան (***Ստեփանյան Գ.,*** *Համառոտ ակնարկ Բաքու քաղաքի հայկական եկեղեցիների պատմության, հայոց պատմության հարցեր, N 8, Ե., 2007, էջ 153):*

թեմի առաջնորդ Դանիել վրդ. Շահնազարյանցին (1863-1868, Տարոնեցի): Ստանալով շինարարական աշխատանքներ սկսելու՝ Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի (1858-1865) թույլտվությունը՝ թեմակալը 1863 թ. հունիսին օրհնում է եկեղեցու հիմքը[10]: Նոր եկեղեցին կառուցվում էր «Պարապետ» կոչված հրապարակի մոտ (Կույսի աշտարակի մերձակայքում)՝ բաքվեցի բարերար Ջավադ Մելիքյանցի տրամադրած ֆինանսական միջոցներով, Սբ. Աստվածածի եկեղեցու հասույթներով և թեմի հայության հանգանակած գումարներով[11]: Եկեղեցու կառուցման աշխատանքներն ավարտվել են Շամախու հայոց թեմի առաջնորդ Անդրեաս արք. Անդրեասյանի (Պոլսեցի, 1869-1874) օրոք, իսկ օծումը տեղի է ունեցել 1869 թ. մայիսի 4-ին՝ Սբ. Գրիգոր Լուսավորչի անվամբ[12]. «Օծաւ եկեղեցին հրամանաւ Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն հայոց Տ. Տ. Գէորգայ Դ.ի ի 4 մայիսի 1869 ամի, օրհնութեամբ վիճակաւորի թեմիս Անդրէաս արքեպիսկոպոսի առ կայսերութեամբն նոյն արքայի, փոխարքայութեամբ յիշեալ Մեծ Իշխանին և առ նահանգապետութեամբ նորին գերազանցութեան պարոն Միխայէլ Պետրովչի Կուլիբէկեան»[13] (նկ. 1): Եկեղեցին հորինվածքով եռանավ է, ունի կենտրոնագմբեթ դահլիճ, ութանիստ թմբուկ և սրածայր վեղար, արևմտյան կողմից ունեցել է եռահարկ զանգակատուն: Կառուցված է սրբատաշ քարից, հյուսիսային և հարավային մուտքերը երկու կողմից երիզել են բարձրադիր զույգ խաչքարերը[14]: Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին Բաքվի հայերի համար համարվում էր ազգային այն կառույցը, որի շուրջը հիմնականում կենտրոնանում էին բարեգործական և կրթամշակութային օջախները: Թեմի առաջնորդ Դանիել արք. Շահնազարյանցի օրոք (1863-1868), Բաքվի հայերի հանգանակած միջոցներով եկեղեցուն կից 1866 թ. հիմնվել է Սբ. Գրիգոր Լուսավորչի անվան իգական դպրոցը: Այն ունեցել է երկու դասարան և պահվել է «Մարդասիրական ընկերության» միջոցներով: Եկեղեցական-ծխական դպրոցներում ուսուցանվող առարկաներից զատ, այստեղ դասավանդվել է նաև ֆրանսերեն[15]:

1870 թ. նոյեմբերի սկզբներին, երբ «Մարդասիրական ընկերության» խորհուրդը որոշում է կառուցել նոր շենք, որտեղ պետք է կենտրոնանային գրադարան-ընթերցասրահը, տպարանը, իգական դպրոցը և այլն, որպես շինության վայր ընկերության խորհուրդը դարձյալ ընտրում է Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու դատարկ շրջակայքը[16]: Շինարարական աշխատանքների թույլտվության համար «Մարդասիրական ընկերության» խորհուրդը Շամախու կոն-

---

[10] **Սմբատեանց Մ.,** *նշվ. աշխ., էջ 375:*

[11] *Նույն տեղում:*

[12] *ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4348, թ. 3:*

[13] **Սմբատեանց Մ.,** *նշվ. աշխ., էջ 377:*

[14] **Կարապետյան Ս.,** *Հայերն Ապշերոնյան թերակղզում, Առավոտ, 26.VII.1997:*

[15] *Մեղու Հայաստանի, Թիֆլիս, 21.V.1866, տե՛ս նաև Արարատ, 1876, մարտ, էջ 117, տե՛ս նաև* **Երկանյան Վ.,** *Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870-1905), Ե., 1970, էջ 54:*

[16] *Արարատ, 1871, հունվար, էջ 336:*

սիստորիայի միջոցով 1870 թ. նոյեմբերի 6-ին դիմեց Գևորգ Դ կաթողիկոսին. «Անդամք խորհրդարանի այս ներկայ յայտարարութեամբս խնդրամատոյց լինելով Ձեր Բարձր Սրբազնութեանը, խնդրում են ձեր միջնորդութիւնը անխնայ ի գործ դնելու ուր և ինչպէս հարկն է, որ Բարձրագոյն Հոգևոր իշխանութեան կողմանէ թոյլտվութիւն լինի Մարդասիրական ընկերութեան յիշեալ նորաշէն Եկեղեցւոյ շրջակայքում մտադրեալ շինուածքն շինելու…»[17]: Թույլտվության դեպքում «Մարդասիրական ընկերությունը9» պարտավորվում էր հոգալ կառուցվող թեմական առաջնորդարանի, կրպակների, գրատան, տպարանի և ուսումնարանի շինարարական ծախսերը, իսկ նշված բոլոր շինությունները կհամարվեին որպես Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու սեփականություն: Ընկերությունը միաժամանակ պարտավորվում էր հարկ եղած դեպքում հոգալ երկսեռ ծխական դպրոցների նյութական կարիքները. «Ընկերութիւնը պարտաւորվում է պահպանելու, բարեկարգելու և ծխական դպրոցին օգնելու, երբ հոգե- վոր Իշխանութեան եկեղեցական եկամուտներից սահմանեալ գումարը չբաւականանայ…»[18]: Գևորգ Դ կաթողիկոսի թույլտվությունն ստանալուն պես ընկերությունը 1871 թ. սկսեց շինարարական աշխատանքները, որ ավարտվեցին 1873 թ.: Շինարարական աշխատանքներն անմիջականորեն ղեկավարում էին խորհրդի անդամներ Գրիգոր Թումայանը և Հակոբ Ապրեսյանը: Շենքը եղել է մեկ և կես հարկանի, ունեցել է 13 լուսավոր և հարմարավետ սենյակներ, որտեղ տեղակայվել են Սբ. Հռիփսիմյան օրիորդաց և Սբ. Մեսրոպյան արական եկեղեցական-ծխական դպրոցները, տպարանը և գրադարան-ընթերցասրահը[19]:

Փաստերը վկայում են, որ Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու քահանաներն իրենց ազգանվեր ու արգասաբեր գործունեությամբ զգալի ավանդ են թողել ինչպես եկեղեցու վերաշինության, այնպես էլ Բաքվի հայության համար: Այսպես, եկեղեցու ավագ քահանա Թադևոս Բուդաղյանցի նախաձեռնությամբ, Բաքվում հաստատված շուշեցի Լազարյանների գերդաստանի ներկայացուցիչ գեներալ-լեյտենանտ Հովհաննես Լազարյանցի աջակցությամբ 1872 թ. ապրիլի 1-ին[20] Բաքվի հայ ազդեցիկ հայերի մասնակցությամբ հրավիրված խորհրդակցությունում որոշվում է ստեղծել «Բաքվի հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձություն»[21]: Նորաստեղծ բարեգոր-

---

[17] *Նույն տեղում:*

[18] *Նույն տեղում:*

[19] *Краткий исторический очерк состояния и деятельности Бакинского человеколюбивого общества во имя Св. Григория Просветителя Армении с 1854 по 1896 гг., составил член совета общества, секретарь А. Калустянц, Баку, 1896, с. 31, տե՛ս նաև Պատմական համառօտ տեսութիւն Բագուայ Հայոց Մարդասիրական ընկերութեան 25-ամեայ գործունեութեան, աշխատասիրեց ատենադպիր ընկերութեան* **Ա. Գալստեանց,** *Բագու, 1891, էջ 29-30:*

[20] **Արզար Աւագ Քահանայ Տէր-Յարութիւնեանց**, *Հայ գաղթականները Բագու եւ նրանց վերաղարձը, Բագու, 1903, էջ 9:*

[21] *Պատմութիւն Բագուայ Հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձութեան, էջ 5, տե՛ս նաև Մշակ, Թիֆլիս, 21. II. 1880, տե՛ս նաև Краткий исторический очерк состояния и деятельности Бакинского человеколюбивого общества во имя Св. Григория Просветителя Армении с 1854 по 1896 гг., с. 28.*

ծական ընկերության կանոնադրությունը բաղկացած էր 5 կետից, որի 1-ին կետում ասված էր. «Բագու քաղաքում կարգւում է նորահաստատ ընկերութիւն՝ աղքատաց և տնանկաց ապրուստը հոգալու. նրանցից ցաւագարներին ու հիւանդներին բժշկութեան հնարները գործ դնելու և մեռելոց թաղման կարգը կատարելու համար»[22]: Կազմվեց հոգաբարձություն, որի անդամներն էին Թադևոս քհն. Բուդաղյանցը, Գրիգոր Այվազյանցը, Գրիգոր Դիլդարյանցը, Անդրեաս Մելիքյանցը, Բաղդասար Սարգսյանցը, իսկ գործավար և հաշվապահ՝ Սարգիս Վարշամյանցը[23]: «Աղքատախնամ եկեղեցական հոգաբարձության» նախագահն էր Թադևոս քհն. Բուդաղյանցը[24]: Ավելի ուշ՝ 1892 թ. հունիսի 6-ին, երբ Բաքվում բռնկվում է խոլերայի համաճարակ, կանխարգելող աշխատանքները տանելու նպատակով Բաքվի նահանգապետի որոշմամբ, նահանգի մասշտաբով ստեղծված «Առողջապահության հասարակական կոմիտեն» նախագահում էր Շամախու հայոց թեմի եկեղեցական ծխական դպրոցների տեսուչ, Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու քհն. Եղիշե Գեղամյանցը, որն ազգաբնակչության համար չափազանց ծանր այդ շրջանում ամենայն պատասխանատվությամբ կատարեց իրեն վստահված գործը[25]: 1891-1903 թթ. անընդմեջ եկեղեցում քահանայագործել է Մեսրոպ Տեր-Ոսկանյանցը[26]:

Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերանորոգման աշխատանքները մշտապես գտնվել են Շամախու հայոց թեմի գրեթե բոլոր առաջնորդների ուշադրության կենտրոնում: Անդրեաս արք. Անդրեասյանի նախաձեռնությամբ 1874 թ. մասնակի վերանորոգվում է եկեղեցին: Շենքի քայքայված վիճակի և շինարարական աշխատանքների անհրաժեշտության մասին թեմակալին հայտնել էր եկեղեցու երեցփոխը, որն այդ մասին գրել է հետևյալը. «Ի քանի ամաց հետէ ջուրք անձրեւի եւ ձեան թափանցանին ի ներքո կոյս սբ. Լուսաւորիչ եկեղեցւոյ տեղւոյս ի պատճառս չորանալոյ եւ հող դառնալոյ միանգամայն շաղախաց սալայատակաց կաթուղիկէի եւ տանեաց այնորիկ եկեղեցւոյ եւ թանան ի ներքուստ զամենայն ծեփ նորին կաթելով ի վերուստ ի վերա ժամաւոր ժողովրդեան եւ անշուք եւ անզարդ կացուցանելով առաջի տեսողաց»[27]: Եկեղեցու բարեկարգման ուղղությամբ մեծ աշխատանք է կատարել նաև եկեղեցու երեցփոխան Մինաս Մելքոնյանը: Շնորհիվ նրա կատարած աշխատանքների, եկեղեցին մշտապես գտնվել է բարվոք վիճակում: «Հայկական աշխարհն» այդ առիթով գրում է. «Աւելորդ չեմ համարում

[22] *Նույն տեղում:*
[23] *Նույն տեղում:*
[24] *Հայկական աշխարհ, Բագու, 1878, N 10-11-12, էջ 298:*
[25] *ՀԱԱ, ֆ. 166, ց. 1, գ. 10, թ. 2:*
[26] *ՀԱԱ, ֆ. 458, ց.1, գ. 111, թ. 1:*
[27] *Արարատ, 1874, փետրվար, էջ 40:*

յիշել իբրև երեսփոխանի ջերմեռանդ եկեղեցասիրութեան ապացոյց, որ Բագուի մէջ, որտեղ գրէթէ՝ ծառի իւրաքանչիւր կանաչած տերևը նշանակութիւն ունի, մեր եկեղեցու բակը, երեցփոխանի առանձին հոգացողութեամբ, բաւական ծաղկազարդ և ծառազարդ է»[28]:

Հայ երաժշտության ամենանշանավոր գործիչներից մեկի՝ երգահան, խմբավար, երաժշտական բանահավաք ու քառաձայն երգարվեստի մեծ վարպետ Քրիստափոր Կարա-Մուրզայի՝ Բաքվում 1885-1893 թթ. անընդմեջ ապրելու տարիների մի կարճ շրջան կապված է Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հետ: Կարա-Մուրզային հաջողվել էր - Բաքվում կազմակերպել 40 հոգուց բաղկացած մի խումբ և հարուստ երգացանկով պարբերաբար համերգներ տալ տեղի հանդիսատեսի համար: Կարա-Մուրզան, նպատակ ունենալով իր ամբողջ խմբով երգել քառաձայն պատարագը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնից ստանում է Մակար Թեղուտեցի կաթողիկոսի համապատասխան թույլտվությունը. 1887 թ. Զատկի տոնին Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում մեներգիչներ Արտաշես Սուքիասյանի, Մակար Վարդիկյանի և Ներսես Շահլամյանի մասնակցությամբ առաջին անգամ կատարում է քառաձայն պատարագը և արժանացնում հավանության: «...Բագուայ հայոց եկեղեցում ամբողջ պատարագը երգում է քառաձայն. թէ առաջնորդը և թէ ժողովուրդը այդ նորութիւնը հաւանում և ընդունում են շնորհակալութեամբ»[29],- գրում է Կարա-Մուրզայի կենսագիր Հով. Կարապետյանը:

Թեմի առաջնորդ Մեսրոպ արք. Սմբատյանցի (1887-1894) թեմակալության տարիներին, երբ 1888 թ. հոկտեմբերի 22-ին Բաքու է ժամանում Ամենայն հայոց կաթողիկոս Մակար Ա-ն, առաջին այցը Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի էր, ուր «կարդացուեցին սահմանեալ աղօթքներն»[30]: Մեսրոպ արք. Սմբատյանցի օրոք վերանորոգվում է նաև արդեն իսկ խարխլված գմբեթը: Այդ առիթով ուշագրավ տեղեկություն է հաղորդում Բաքվում այդ տարիներին բնակվող ճարտարապետ, հասարակական-քաղաքական գործիչ Հովհաննես Քաջազնունին: 1894 թ. մայիսի 28-ին կնոջը հասցեագրած նամակում նա գրել է. «Այստեղի հասարակությունը երեկ կանչում էր խորհրդի: Եկեղեցու գմբեթը պիտի քանդեն, նորը շինեն: Ես էլ կանչված էի: Գուցե այդ աշխատանքը ինձ հանձնվի, առանց փողի, ի հարկե՝ ազգային գործ է: Մի ամբողջ կոմիսիա է ընտրվել, որի անդամ լինելը ես էլ պատիվ ունեմ»[31]: 1897 թ. մայիսին եկեղեցի այցելած բանասեր և հրապարակախոս Սարգիս Ծոցիկյանը հետևյալ նկարագրությունն է թողել. «Համբարձման տօնի օրն էր, մէկ-երկու բարեկամաց այցելելէ ետք, ուղղուեցայ Հայոց մայր եկեղեցին (ս. Լուսաւորիչ): Տաճարը՝ միջակ մեծութեամբ, կաթուղիկէով, քարաշէն, կամարաձև շէնք մի է: Ունի գեղեցիկ կարմիր խաչկալով սեղան

[28] *Հայկական աշխարհ, Բագու, 1878, N 10, 11, 12, էջ 300-301:*

[29] **Կարապետեան Յով.,** *Քրիստափոր Կարա-Մուրզա (Նրա կեանքն ու գործունէութիւնը), 1854-1902, Թիֆլիս, 1904, էջ 39, տե՛ս նաև Մշակ, Թիֆլիս, 1.III.1887:*

[30] *Ամենայն հայոց վեհափառ Մակար կաթուղիկոսի ճանապարհորդութիւնը, Արարատ, 1888, նոյեմբեր, էջ 710:*

[31] **Դոլուխանյան Լ.,** *Հովհաննես Քաջազնունին ճարտարապետ, Ե., 1997, էջ 10:*

մը, վերնատուն մը կանանց համար, համանման Թիֆլիզի մայր եկեղեցւոյն: Զանգակատունը քակուած է, նորը շինելու նիւթերը պատրաստ: Կըսէին որ եկեղեցին ալ մեծացնելու դիտաւորութիւն մը կայ, որուն պէտքը անհրաժեշտ կըդառնայ երթալով…»[32]: Եկեղեցուն մշտապես նվիրատվություններ են կատարել ազգային բարերարները: Ըստ Ս. Ծոցիկյանի՝ թեմի առաջնորդ Կարապետ եպս. Այվազյանցի (թեմական՝ 1896-1898) վկայությամբ. «պ. պ. Օրմանեանց, Յակոբեան չորս ջահեր նուիրած են եկեղեցւոյն, յիշատակ իրանց անուան: Առաջինը երեք հատ, խորանին առջև կախուած, բաւական մեծադիր… Վերջինը միայն մէկ հատ, աւելի մեծ դիրքով, տաճարին կեդրոնը: Ասոնցմէ զատ երկու հատ ալ փոքր ջահեր, երկու դասերուն մէջ կախուած, նուիրուած տիկնոջմէ մը, որուն անունը Առաջ. Սրբազանն ալ մոռացած էր»[33]:

1896 թ. հունվարի 11-ին Սբ. Գիրգոր Լուսավորիչ եկեղեցում հրաժեշտի պատարագն է տվել ու քարոզ կարդացել XIX դ. երկրորդ կեսի գրական-հասարակական և հոգևոր-մշակութային նշանավոր գործիչ, «Հայկական աշխարհ» ամսագրի խմբագիր և մանկավարժ, 1877 թվականից Շամախու հայոց թեմի վերատեսուչ Խորեն վրդ. Ստեփանեն[34]: Ներկա բազմությունը վերջինիս քարոզը լսել է արցունքոտ աչքերով. «Խորեն սրբ. տալով հրաժեշտի պատարագ, որին ներկայ էր մեծ բազմութիւն: Սրբազանը քարոզ խօսեց. շատերը լացին…»[35]: Եկեղեցու հիմնովին ավերված զանգակատան նորովի կառուցման աշխատանքները Էջմիածնի Սինոդի թույլտվությամբ 1897 կեսերին նախաձեռնեց թեմի առաջնորդ Կարապետ եպս. Այվազյանցը[36]: XIX դարավերջին եկեղեցին արդեն իսկ բարեկարգ վիճակում էր:

Բաքվի հայերի պատմության մեջ հիշարժան և նշանակալից իրադարձություն էր Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցու (Խրիմյան Հայրիկ) 1898 թ. փետրվարի 5-13-ը Բաքու կատարած պաշտոնական այցելությունը: Տեղեկանալով կաթողիկոսի՝ Բաքու ժամամանելու մասին, քաղաքի հայ հասարակությունն ապրում է բերկրալից պահեր, քանզի իրեն այցելության էր գալիս հայոց վշտի, գաղափարի ու ազատության ջահակիրը: Տեղ հասնելուն պես վեհափառը կայարանից ուղևորվեց Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, որի արտաքին դռները զարդարված էին դափնյա կամարներով, իսկ ներքին դռան ճակատին՝ մեծ պաստառի վրա նկարված էր երկու հրեշտակների ձեռքում պահված հայրապետական թագ, որի վրա գրված է եղել. «Էջմիածին ի հօրէ…», ներքևում՝ տաճարի մանրանկարը և կաթողիկոսի անվան սկզբնատառը, իսկ պաստառի ճակատին մեծ-

[32] **Ծոցիկեան Ս.,** *Բաքու, մայիսի 22 (Թղթակցութիւն «Արձագանքի»), Արձագանք, Թիֆլիս, 28.V.1897:*

[33] *Նույն տեղում:*

[34] **Մխիթարյան Մ.,** *Խորեն Ստեփանեի «Հայկական աշխարհ» ամսագիրը, Ե., 2002, էջ 25:*

[35] *Մուրճ, Թիֆլիս, 1897, N 1, էջ 166:*

[36] **Կարապետյան Ս.,** *Հայերն Ապշերոնյան թերակղզում, Առավոտ, Ե., 1997, հուլիսի 26, N 69, էջ 1:*

մեծ տառերով գրված է եղել. «Տէր պահեա զՀայրապետութիւն Հայոց»[37]: Վեհափառի՝ ե-կեղեցի մտնելուն պես միաձայն սկսում են հնչել զանգերը, միանգամից վառվում են նաև բոլոր ջահերը: Նրա աղոթքն ու խոսքը լսելու համար ժողովուրդը խռնվել էր եկեղեցում. «Եկեղեցու բակը՝ շրջականներով, մանաւանդ մէջը, բոլորովին անբաւական, գետին ասեղ ձգելու տեղ ստուգիւ չըկայ. ժողովրդեան յորձանքներ, որոնք անհանգիստ անընդհատ այս ու այն կը տատանին: Երգեցիկ խումբը թէև լաւ չի կազմակերպուած, կը վարէր ու երբեմն առանձին կերգէր յայտնի երգիչ պ. Շահլամեան: Համբաւաւոր երգիչը իւր բնա-տուր շնորհքը եկեղեցական երգեցողութեանց մէջ ալ որոշ կերպով կարտայայտէ»[38]:

Մխիթար վարդապետ Տեր-Մկրտչյանի՝ ռուսահայոց թեմերի վերաբերյալ կազմած տեղեկագրի համաձայն՝ 1900 թ. դրությամբ Սբ. Գրիգոր Լուսավորիչ և Սբ. Աստվածածին եկեղեցիները միասնաբար ունեցել են 1 վարդապետ, 11 քահանա, 2 եկեղեցական սպա-սավոր և 49.445 ռ. 29 կ. դրամագլուխ[39]: Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում երգեցիկ մշտական խումբ ունենալու խնդրով մտահոգ կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի 1901 թ. դեկտեմբերի 6-ի կոնդակով եկեղեցում կազմավորվում է 36 հոգուց բաղկացած երգչա-խումբ, որը երգելու էր տոն և կիրակի օրերին: Խմբավարն էր Ս. Պետերբուրգում երա-ժըշտական կրթություն ստացած Հարություն Պապովյանը[40]: Բաքվի հայ բարերարներից շատերը զանազան առիթներով դրամական նվիրատվություններով մշտապես զգալի օգնություն են ցուցաբերել Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն: Ինչպես, օրինակ՝ նավթարդյունաբերող Երվանդ Բուդաղյանը 1902 թ. հոկտեմբերին «ի յիշատակ իւր հանգուցեալ մօր՝ Մարիամ Յովսէփեան Բուդաղեանի» նվիրաբերել էր 1500 ռ[41]:

Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին լուրջ փորձության ենթարկվեց, երբ 1903 թ. հունի-սի 12-ին Կովկասի կառավարչապետ Գ. Գոլիցինի նախաձեռնությամբ հրապարակվեց օրենք՝ հայ եկեղեցական կալվածքներն ու գույքերը պետականացնելու վերաբերյալ: Հայ ժողովրդի ազգային, կրոնական զգացմունքներն ու քաղաքական շահերը ոտնահարող այդ օրենքի դեմ ընդվզեց Խրիմյան Հայրիկը, որը 1903 թ. օգոստոսի 21-ի կոնդակով կար-գադրություն հղեց բոլոր թեմերին՝ եկեղեցու ունեցվածքը քաղաքացիական իշխանութ-յուններին չհանձնելու վերաբերյալ[42]: 1903 թ. սեպտեմբերի 2-ին՝ գույքի բռնագրավման օ-րը, Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու զանգերի ազդանշանով գավթում հավաքվեց հայ բնակչության հոծ բազմություն. «Վաղ առաւօտից հայոց եկեղեցին եւ բակը ամէն կողմից լցուել էին

[37] **Ծոցիկեան Ս.,** *Վեհափառ Հայրիկը Բագու, Բագու, 1898, էջ 15-16:*

[38] *Նույն տեղում, էջ 16:*

[39] *Արարատ, 1902, փետրվար, էջ 143, տե՛ս նաև* **Մխիթար վարդապետ,** *Հայերը Ռուսաստանում, Վաղարշապատ, 1906, էջ 36:*

[40] *ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 53, թ. 8, 10:*

[41] *ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 91, 1:*

[42] **Կոստանդյան Է.,** *Մկրտիչ Խրիմյան: Հասարակական-քաղաքական գործունեությունը, Ե., 2000, էջ 413:*

խուռներում բազմութեամբ. Ամբողջ օրը նեարդայնացած ժողովուրդը անհամբերութեամբ սպասում էր պէտական պաշտօնեայի գալուն»[43]: ՀՅ Դաշնակցության Բաքվի «Ոսկանապատի» կենտրոնական կոմիտեն կանխազգալով դեպքերի զարգացման ընթացքը, Նիկոլ Դումանի, Գրիգոր Միրզաբեկյանի (Մածուն Խեչո), Թադևոս Ամիրյանի (Գիժ Թաթոս) և Երվանդ Բաբերյանի (Ջալլադ) մասնակցությամբ հրավիրված խորհրդակցությունում որոշեց եկեղեցու բակից հեռացնել անզեն ամբոխին և զինված խմբերի օգնությամբ թույլ չտալ կառավարական պաշտոնյաներին մտնելու եկեղեցի և դիմադրել այնքան, մինչև որ անզոր կլինի կռիվը մեծ ուժի դեմ: Գործի պատասխանատվությունը հանձնվեց Երվանդ Բաբերյանին և Գրիգոր Միրզաբեկյանին, որոնց պետք է օգնեին հայդուկային մյուս խմբերը[44]: Մութն ընկնելուն պես ոստիկանությունը սկսեց օղակել եկեղեցին, և սկսվեց կատաղի փոխհրաձգություն: Կռիվն ավելի թեժացավ, երբ ոստիկաններին օգնության հասան 2 հարյուրակ կազակներ և Սալիանի հետևակ գնդից կես վաշտ[45]: Զորքին հաջողվեց եկեղեցին գրավել միայն կեսգիշերին, մի քանի ժամ տևած մարտերից հետո, երբ արդեն սպառվել էին պաշարվածների փամփուշտները: Նրանց մի մասը, պատուհաններից դուրս փախչելով, ազատվում է[46]: Արյունահեղ այդ ընդհարման ընթացքում զոհվեցին 11 և վիրավորվեցին 45 հայեր[47]:

Եկեղեցին հիշատակվում է թեմում 1916 թ. գործող եկեղեցիների ցանկում[48]: Եկեղեցին ամբողջապես կողոպտվել է 1918 թ. սեպտեմբերի 15-ին՝ թուրքական զորքի կողմից Բաքուն գրավելուց հետո[49]: Ընդ որում, եկեղեցու կրած նյութական վնասը կազմում էր 270.220ռ.[50]: Եկեղեցու խորանից թալանել էին Սաղիանի Սբ. Ստեփաննոս Նախավկա վանքի արծաթեղենն ու զգեստները[51]: Թուրքական արշավանքի հետևանքով Շամախի քաղաքի հրդեհվելու և հայ բնակչության՝ Բաքու գաղթելու պատճառով, թեմի առաջնորդ Բագրատ արք. Վարդազարյանը (1916-1921) 1918 թ. հոկտեմբերի 16-ին թեմի առաջնորդարանն ու վիճակային ատյանը Շամախուց տեղափոխում է Բաքու և տեղի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին դարձնում առաջնորդանիստ Մայր եկեղեցի, իսկ թեմը վերանվանվում է Բաքվի թեմ[52]:

Բաքվի նահանգում հայահալած քաղաքականությունը շարունակվեց մուսավաթական Ադրբեջանի գոյության ողջ ընթացքում:

---

[43] **Գիւլխանդանեան Ա.,** *Բագուի դերը մեր ազատագրական շարժման մէջ, Հայրենիք, Բոստոն, 1925, N 3, էջ 125:*

[44] *Նույն տեղում, էջ 126:*

[45] *Մշակ, Թիֆլիս, 5.VIII.1903.*

[46] *Դրօշակ, Ժնեւ, 1903, N 8, էջ 115:*

[47] *Նույն տեղում:*

[48] *ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 298, թ. 56:*

[49] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 280, թ. 1:*

[50] *Նույն տեղում, ց. 5, գ. 189, թ. 7:*

[51] *Մեսրոպ Մաշտոցի Մատենադարան, Տիրայր վարդապետի արխիվ, թղթ. 126, վավ. 230, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 280, թ. 1:*

[52] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 193, թ. 3-4:*

Պատերազմում Թուրքիայի պարտությունից և թուրքական զորքերի՝ Անդրկովկասից հեռանալուց հետո ադրբեջանական իշխանությունները, առաջնորդվելով «Ադրբեջանը՝ ադրբեջանցիներին» կարգախոսով, Բաքվում և գավառներում հայերի նկատմամբ շարունակեցին վարել հալածանքների քաղաքականություն: Առաջին թիրախը Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին էր, որտեղ զենք և զինամթերք գտնելու պատրվակով, 1919 թ. հունիսի 11-ին թուրք սպայի գլխավորությամբ 100-ի հասնող ադրբեջանական զինվորները շրջապատում են եկեղեցին: Սակայն զենք չհայտնաբերելով՝ գազազած զինվորները ամբոխի ներկայությամբ վայրենաբար հրացանազարկ են անում եկեղեցու պատերը[53]:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո, երբ Միջին Ասիայում տեղի թեմական - իշխանության կազմալուծման պատճառով Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը 1920 թ. սեպտեմբերի 3-ի կոնդակով Տաշքենդի, Սամարղանդի, Անդիժանի, Կոկանդի, Աշգաբադի, Չարջոուի, Ղըզըլ-Արվատի, Նոր-Բուխարայի, Կրասնովոդսկի և Չաքիչլարի հայկական եկեղեցիները հանձնեց Բաքվի հայոց թեմի տնօրինությանը, թեմը կոչվեց Բաքվի և Թուրքեստանի, և առաջնորդանիստ դարձավ Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին[54]:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո, երբ 1930-ական թթ. եկեղեցու դեմ իշխանությունների հալածանքի քաղաքականության պայմաններում քարուքանդ արվեցին բազում եկեղեցիներ, մատուռներ և վանքեր, Բաքվում և մերձակայքում գործող վեց [Սբ. Աստվածածին, Սբ. Գրիգոր Լուսավորիչ, Սբ. Թարգմանչաց, Սբ. Հովհաննես Մկրտչի, Սբ. Թադեոս և Բարդուղիմեոս, Բուզովնա գյուղի (հայոց գյուղ) Սբ. Եղիայի և Սբ. Անդրեասի] եկեղեցիներից կանգուն մնացին և գործեցին միայն Սբ. Աստվածածինը (կանգուն էր մինչև 1989 թ.) և Սբ. Գրիգոր Լուսավորիչը: 1937-1945 թթ. Բաքվի և Թուրքեստանի թեմական առաջնորդի պաշտոնը ժամանակ առ ժամանակ մնացել է թափուր: Հայրենական մեծ պատերազմից հետո հայոց կաթողիկոս Գևորգ Զ Չորեքչյան կաթողիկոսը ձեռնամուխ եղավ հայ եկեղեցու թեմերի վերակազմավորման և վերաբացման աշխատանքներով. 1945 թ. վերաբացվեց Ադրբեջանի հայոց թեմը[55]: Առաջնորդական փոխանորդ կարգվեց Վարդգես քհն. Գրիգորյանը (1945-1946): Նույն թվականից բացվել է նաև թեմի առաջնորդանիստ Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին[56]: Եկեղեցու վերաբացման օրվանից այնտեղ ծառայության է անցնում նախ որպես տնտեսվար և երգչախմբի անդամ, իսկ հետագայում որպես մոմավաճառ Հայկանուշ Գրիգորյանը, որը եկեղեցանվեր այդ ծառայությունը կատարում է շուրջ քառասուն տարի: Ժամանակակիցների մեջ դեռևս վառ է այն հիշողությունը, երբ Ս. Ծննդյան տոներին այդ կինը, դպիրի

[53] *ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 104, թ. 25:*

[54] *ՀԱԱ, ֆ. 56, ց. 2, գ. 2055, թ. 1:*

[55] **Ստեփանյան Գ.,** *Շամախու թեմ, Քրիստոնյա Հայաստան. Հանրագիտարան, Ե., 2002, էջ 819:*

[56] *Էջմիածին, 1985, հունիս, էջ 36:*

շապիկը հագին, կարդում էր Դանիելի մարգարեությունը՝ իր գեղեցիկ և զրնգուն ձայնով[57]:

Բաքվի և Թուրքեստանի հայոց թեմը մշտապես գտնվել է հայոց գրեթե բոլոր կաթողիկոսների հոգածության ներքո: Թեմական խորհրդի հրավերով հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանը (1955-1994) թեմի առաջնորդ Տիրայր եպս. Մարտիկյանի (1956-1958) օրոք՝ 1957 սեպտեմբերին հովվապետական այցելություն է կատարել Բաքու: Սբ. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցում Վեհափառ Հայրապետը սեպտեմբերի 21-ին վարում է կիրակնամտի ժամերգությունը և ոգեշունչ քարոզ է կարդում[58]: Վազգեն Ա Պալճյանը հովվապետական այցելություններ է կատարել Բաքու նաև թեմի հաջորդ առաջնորդ Հուսիկ եպս. Սանթուրյանի (1961-1981) 1962, ապա 1969 թթ. և Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում հանդիսավորապես մատուցել հայրապետական ս. պատարագ[59]: 1980-ական թթ. Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու գործադիր մարմինը նախագահել է Ամալյա Բեգլարյանը: Նշված ժամանակահատվածում եկեղեցում հոգևոր հովիվներ են եղել Վարդան աբդ. Դիլանյանը և Աշոտ սրկ. Պողոսյանը[60]: Պետք է նշել, որ Բաքվի Սբ. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցին մահմեդական հոծ զանգվածով շրջապատված Բաքվի հայության համար եղել է այն հզոր կառույցը, որի ազգանվեր գործունեության շնորհիվ երկար ժամանակ պահպանվել են հայ համայնքի ազգային ծեսերը, մշակույթը, դավանաբանությունը և ընդհանրապես հայկական ոգին:

1988-1990 թթ. Ադրբեջանում սկիզբ առած հայահալած քաղաքականության պայմաններում, 1989 թ. դեկտեմբերի 25-ին ադրբեջանական խուժանը վայրագորեն հրդեհել է եկեղեցին, որի հետևանքով այրվել են մեծ քանակությամբ եկեղեցական արժեքավոր գրքեր, սրբապատկերներ և կրոնական ամբողջ գույքը[61]: Պղծելով եկեղեցին՝ Ադրբեջանի իշխանությունները շենքն օգտագործել են այլ նպատակներով: Նախապես այն տրամադրվել է գիտաարտադրական վարչության շինարարական կազմակերպությանը[62]: Այնուհետև շենքն օգտագործվել է որպես գրքերի պահեստ: 2009 թ. հուլիսի 3-ին, երբ մի խումբ հայ (ՌԴ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան

---

[57] *Հայկանուշ Գրիգորյանը ծնվել է 1905 թ., Զանգեզուրում: Փոքր հասակից ծնողների հետ տեղափոխվել է Բաքու: Հայրը՝ Արշակ Գրիգորյանը, ծառայության է անցել տեղի հայոց Մայր տաճարում, որպես դպիր և մոմավաճառ: Դեռևս տասը տարին չբոլորած՝ փոքրիկ Հայկանուշն ամեն օր հոր հետ հաճախել է հայոց եկեղեցի և երգել եկեղեցու երգչախմբում: Մինչև 1945 թ. Հ. Գրիգորյանը երգել է նաև ականավոր երգահան Անտոն Մայիլյանի երգչախմբում: 1985 թ. մարտի 16-ին Ադրբեջանի հայոց թեմական խորհրդի որոշմամբ տեղի է ունեցել Հ. Գրիգորյանի ծննդյան ութսուն և եկեղեցանվեր ծառայության քառասուն ամյակին նվիրված հանդիսություն՝ նախագահությամբ Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ Անանիա եպս. Արաբաջյանի (Թղթակից, Հավատավոր-եկեղեցասեր կինը և նվիրյալ աշխատավորուհին, Էջմիածին, 1985, հունիս, էջ 36-37):*

[58] *Էջմիածին, 1957, հոկտեմբեր, էջ 16:*

[59] *Նույն տեղում, 1962, հուլիս, էջ 9-14, 1969, մայիս, էջ 11-14:*

[60] *Նույն տեղում, 1985, հունիս, էջ 36:*

[61] *Գրական թերթ, 2.II.1990:*

[62] *Իրավունք, 10-16. XI.1998:*

Արմեն Սմբատյան, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հերմինե Նաղդալյան, Ս. Փարաջանովի տուն-թանգարանի տնօրեն Զավեն Սարգսյան, «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր Արամ Աբրահամյան, Արցախից բժշկուհի Լյուդմիլա Գրիգորյան) և ադրբեջանցի մտավորականներ ու քաղաքական գործիչներ, ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևի խորհրդական, միջազգային մշակութային համագործակցության գծով հատուկ ներկայացուցիչ Միխայիլ Շվիդկովի, ՌԴ-ում Հայաստանի և Ադրբեջանի դեսպանների ու երկու երկրների նախագահների աջակցությամբ, Ստեփանակերտ-Երևան-Բաքու երթուղով այցելել են Բաքու[63], եկեղեցին տեսել են անշուք վիճակում (նկ. 2, 3, 4). գմբեթից և զանգակատնից բացակայել են խաչերը, փայտյա զարդաքանդակ դռները փոխարինված էին երկաթյա կոնստրուկցիաներով, երկու պատուհանները փակվել էին պատով, քերված են եղել հյուսիսային և հարավային մուտքերի երկու կողմից երիզվող զույգ խաչքարերը (հակառակ Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի՝ Լոնդոնի Chatam House-ում արած ստահոդ հայտարարության, թե իբր եկեղեցին վերականգնված է)[64]: «Հայկական եկեղեցին նորոգված չէր: Հայկական արձանագրությունները ջնջված են, խաչը հանված է, իսկ ներսում ոչ թե գրադարան է, այլ գրքերի պահեստի նման մի բան: Կային, օրինակ, Լենինի հատորները»,- նկարագրել է Զ. Սարգսյանը[65] (տե՛ս նկ. 5): Ադրբեջանցիների կողմից բարբարոսաբար քերված էին նաև հայկական արձանագրությունները և խաչերը: Զ. Սարգսյանը եկեղեցու շուրջը չի հայտնաբերել դրանք: Բացակայել են նաև եկեղեցու շրջակայքում երբևէ եղած խաչքարերը, ինչպես նաև բակում կողք կողքի թաղված հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, հայդուկային շարժման առաջին կազմակերպիչներից, ՀՅԴ կուսակցության նվիրյալ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Բագրատ (Գևորգ, Զաքի) վրդ. Թավաքալյանի (1850-1902)[66] և հայ եկեղեցու երախտավորներից մեկի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան, նշանավոր հայագետ ու աստվածաբան, Շամախու հայոց թեմի 1914-1915 թթ. առաջնորդ Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի (1866-1915) տապանաքարերը[67]: Բաքվում հայկական

---

[63] *Հայաստանի Հանրապետություն, 3.VII.2009:*

[64] *Ազգ, 15.VII.2009:*

[65] *Նույն տեղում:*

[66] *Հովիւ, Թիֆլիզ, 1910, N 12, էջ 186:*

[67] *ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 1000, թ. 3, տե՛ս նաև Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԶ. Կարապետ եպիսկոպոս Տէր-Մկրտչեան (փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու), Ե., 2006, էջ 456: Նկատենք, որ Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի շիրմին գերեզմանաքար դնելու համար 1928 թ. Մոսկվայում Արսեն քահանայի նախագահությամբ կազմվել է մի մասնաժողով, որը Գևորգյան հոգեվոր ճեմարանի շրջանավարտների միջոցով պետք է կազմակերպեր հանգանակություն: Սակայն ինչ-ինչ պատճառների բերումով հուշաքարն այդպես էլ չի կանգնեցվում: Մոսկվայի ծխատեր քահանա Արշակ Ճանճիկյանը իր եղբայր Կարապետին 1936 թ. մայիսի 14-ին հղած նամակով ցանկություն էր հայտնել Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի աճյունը տեղափոխել Մայր Աթոռ Ս. Էջմիածին (ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 1000, թ. 2): Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Արտակ եպիսկոպոսի՝ Արշակ քահանա Ճանճիկյանին հղած 1936 թ. հունիսի 5-ի թվակիր նամակից պարզվում է, որ Գերագույն հոգևոր խորհուրդը մտահոգված է եղել Մայր Աթոռ Ս. Էջմիածին տեղափոխել ոչ միայն Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի, այլև Բագրատ վրդ. Թավաքալյանի աճյունները, այդ նպատակով կազմակերպվել է դրամահավաք, և սպասում են անհրաժեշտ թույլտվության (ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 1000, թ. 3): Սակայն այս անգամ ևս հարցին դրական լուծում չի տրվում, որի հետևանքով թեմական գերեզմանը գտնվել է քայքայված վիճակում: Այդ է վկայում Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի քրոջ՝ Փեփրանե Ավագյանցի, հայոց Գևորգ Զ Չորեքչյան կաթողիկոսին 1945 թ. դեկտեմբերի 7-ին հղած*

հուշարձանների վերացման քաղաքականության շարունակությունն են 2007 թ. սեպտեմբերին Բաքվի Նարիմանովյան քրիստոնեական գերեզմանոցի[68] բարբարոսական ավերումը և 2009 թ. հունվարին Բաքվի 26 կոմիսարների [նրանցից 8-ը հայեր էին՝ Ստեփան Շահումյան, Գրիգոր Ղորղանյան (Կորգանով), Արսեն և Թադևոս Ամիրյան եղբայրներ, Սուրեն Հովսեփյան, Բաղդասար Ավագյան, Արմենակ Բորյան, Արամ Կոստանդյան] դամբարանը քանդելը[69]: Անշուշտ, նման քայլը, լիովին տեղավորվում է այդ երկրի ներկա տարածքներում հայկական մշակութային հուշարձանների, հայերի ունեցած ավանդի և ընդհանրապես որևէ հետքի բնաջնջման քաղաքականության տրամաբանության մեջ: Ճիշտ բնութագիր է տվել Ադրբեջանի ներկա պետական կարգին և քաղաքական գործընթացներին քաղաքագիտության դոկտոր Լ. Շիրինյանը. «Ադրբեջանի հասարակական ու ազգային կյանքը բխում է ավարառության ցեղային բնազդներից և ծայրահեղորեն վարակված է հայատյացությամբ ու համաթուրանականության ախտով»[70]: Այս և համանման գործելակերպը, մեկ անգամ ևս փաստարկում է այն իրողությունը,

---

նամակը, որում ասվում էր. «…իմ թանկագին եղբորս և ձեր սիրելի ընկերոջ (Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչեանի) անբախտ Շիրիմը, որը բոլորովին անխնամ և աննշան ընկած է Բաքուի Կարապետ ամայի փողոցում» (Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչեան, էջ 457): Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի գերեզմանը վերաշինվել և գրանիտե նոր տապանաքար (նկ. 4) է դրվել միայն մահվանից շուրջ 72 տարի անց՝ 1987 թ. հունվարի 25-ին: Այդ օրը, Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Անանիա եպս. Արաբաջյանի նախագահությամբ, հավարտ սբ. պատարագի տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն՝ ի հավերժացում մեծանուն հոգևորական գործչի: [**Վարդան աբդ. Դիլանյան,** *Ադրբեջանի հայոց թեմում: Տապանաքար Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի գերեզմանին (Էջմիածին, 1987, ապրիլ, էջ 71-72)*]: *Ի դեպ, Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի գրանիտե նոր տապանաքարի պատրաստման և Բաքու տեղափոխման աշխատանքները նախաձեռնել է այդ տարիներին Սիսիանի կուսշրջկոմի առաջին քարտուղար, ներկայումս «Համո Սահյան» գիտամշակութային հիմնադրամի նախագահ, բանասիրական գիտությունների դոկտոր Շչորս Դավթյանը: Մեզ հետ զրույցում նա պատմեց հետևյալը. 1986 թ. Բաքվում եղած ժամանակ, երբ շրջագայել է Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում, թեմական տապանաքարը տեսել է բոլորովին քայքայված վիճակում: Սիսիան վերադառնալուց հետո տեղի քարագործ վարպետներին պատրաստել էր տվել գրանիտե խաչազարդ տապանաքար: Զգուշության նկատառումներով հայտարարվել էր, որ այն պատրաստվել է Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հավատացյալների նվիրատվությամբ, իսկ Բաքու է տեղափոխվել «շտապ օգնության» մեքենայով:*

[68] *Հայաստանի Հանրապետություն, 19.VIII.2007:*

[69] *Могилы предков, "Анив", Минск, 2009, N 1, с. 65.*

[70] **Շիրինյան Լ.,** *Նոր աշխարհակարգը և Հայաստանը (երկրաքաղաքական-քաղաքակրթական ակնարկ), Ե., 2006, էջ 192:*



Նկ. 1 Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի. XIX դ.



Նկ. 2

Նկ. 4

Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի տապանաքարը



Նկ. 3

Նկ. 5

որ ընդամենը XX դ. 30-ական թթ. կեսերին «ադրբեջանցի» հորջորջված կովկասյան թաթարները XXI դարում անգամ, երբևէ չհրաժարվեցին՝ ավերելու, կողոպտելու և յուրացնելու թյուրք-օղուզական ցեղային բնազդներից, հետևապես և գործելակերպից: Դա բնորոշ է նույնիսկ նրանց «ամենաառաջադեմ» գործիչներին ու «մտածողներին»: Նրանցից մեկը՝ Ադրբեջանի գրողների միության նախագահ Անարը, հրապարակավ հայտարարել է. «Ադրբեջանցի թյուրքերը

չպետք է կտրվեն իրենց թյուրքականությունից»[71]: Անշուշտ, աղրբեջանցի գրողն իր ժողովրդի ծագումնաբանությանը և նրան հարիր գործելակերպին տվել է ճշմարտացի բնութագիր՝ թյուրքականություն, որի գործադրությամբ, ցեղասպանության և բռնագաղթի ճանապարհով ամբողջովին հայազրկվեց ոչ միայն Արևելյան Այսրկովկասը, այլև ավերվեցին ու ոչնչացվեցին դարերի ընթացքում ստեղծված հուշարձանները՝ խաչքարերը, վանքերն ու եկեղեցիները: Այսինքն՝ հայ բնակչության նկատմամբ իրականացվել է նաև մշակութային ցեղասպանություն:

КРАТКИЙ ОЧЕРК ИСТОРИИ БАКИНСКОЙ ЦЕРКВИ СВ. ГРИГОРИЯ ПРОСВЕТИТЕЛЯ

СТЕПАНЯН Г. С.

Резюме

Апшеронский полуостров, который в средние века составлял часть исторического Ширвана, был заселен армянами еще с раннего средневековья. В числе армянских поселений полуострова важное место занимает город Баку, упоминаемый в первоисточниках начиная с V в. С увеличением числа армянского населения в Баку наряду с древнейшей армянской церковью Св. Богородицы в 1863-1869 гг. воздвигается вторая – церковь Св. Григория Просветителя. Для бакинских армян церковь считалась тем национальным институтом, вокруг которого в основном сосредотачивались благотворительные и культурно-просветительские очаги. 25-го декабря 1989 г. азербайджанские варвары сожгли церковь, ценные церковные книги, иконы и все церковное имущество. Остатки постройки азербайджанские власти использовали в других целях. Изчезли кресты с купола и колокольни. Деревянная дверь с орнаментом была заменена железной конструкцией, два окна фасадной части были выложены стеной. Азербайджанцами были также стерты армянские надписи.

[71] **Гусейнова С.,** *Бакинские армяне: этническая идентичность в контексте повседневности, Южный Кавказ: территории, истории, люди. Сборник статей, Тбилиси, 2006, с.113.*